




Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրեայ).

Յայտարարութիւնները ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր թափն 2 կոպեկ.
Տ է լ է ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԿԱՅԻՆԻՒՆ

Բնակ նշանակութիւնը.---ԵՆՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
թիւն. Մամուլ. Մի նոր դպին էլ. Ռուսաց
թատրոն. Նամակ Ալեքսանդրովից. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.---ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.---ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.---ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.---ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Նամակ Անգլիայից.

ԲԵՄԻ ՆԵՄԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Կեանքը և կեանքի հարցերը բնութիւն
—ահա այն բնորոշ գիծը, որ կրում են
իրանց վրա ներկայումս Թիֆլիսի արքու-
նական թատրոնում տրվող ներկայացում-
ները: Մենք տալիս ենք տեղեկութիւններ
այդ ներկայացումների մասին և մեր ըն-
թերցողները գիտեն, որ այնտեղ շոշափ-
ված է ժամանակակից հասարակութեանը
հետաքրքրող հարցերի մի ամբողջ շարք:

Եթէ հայոց բեմը նոյնպէս կարողանար
իր յաճախող հանդիսականների առաջ
պատկերացնել բնորոշ գծերով կեանքի մէջ
գործող հերոսներին իրանց ներքին շարժա-
ւիթներով, իրանց տենչանքներով, ձգտում-
ներով և կրքերով, այն ժամանակ այդ բե-
մը կը կապվէր բնական կապով հասարա-
կութեան հետ և նա կը դառնար մի
ասպարէզ, որ կը զարթոնէր էական
հարցեր կեանքի բարոյական և կատարե-
լագործութեան մասին:

Արքունական թատրոնում տրված ներ-
կայացումները հանդէս բերեցին ժամանա-
կակից կեանքի պատկերներ, որոնց մէջ
մենք տեսնում, թէ ինչպէս հասարակու-
թիւնը ներկայումս գոհ է գնացել ստոր
հակումների հոսանքների:

Դիրք, փող, մօդա և հաճոյք—
ահա այն չորս կուռքերը, որոնց առաջ
խոնարհվել է հասարակութեան մի խոշոր

մասը և տառապում է նրանց ծանրու-
թեան տակ: Ձեր առաջ անցնում են մի
շարք գործողներ, որոնք բարձրագոյն յա-
տնում են, որ այժմ կապիտալիզմի թա-
գաւորութեան և ուրեմն գրամատերերի
հասարակական գերեշխանութեան դար է:
Ահա ուրիշ խմբեր, որոնք ամեն ձիգ թա-
փում են գիրք ձեռք բերելու, որպէս զի
կարողանան իրանց անձնական կրքերին
բաւարարութիւն տալ: Աջողութիւն, ինչ
գնով էլ նա ձեռք բերված լինի, դառ-
նում է մի տենչանք, որի իրագործման
համար գոհվում են բարոյական սկզբունք-
ներ: Սակայն մի պայմանով: Այն է, որ
արտաքին կողմից պահպանված լինեն՝ գե-
ղեցիկ կեղև, վայելուչ ձևեր, քաղաքակր-
թական փայլ: Այդ ձևական վայելչութիւնը
թերադրում է անել բարեգործութիւններ,
գլուխ կանգնել մի որ և է հիմնարկու-
թեան, հովանաւորել մի որ և է ապաս-
տարան: Իսկ երբ այդ արտաքինը կայ,
այնուհետեւ ընդարձակ ասպարէզ է բաց-
ված զանազան տեսակ յափշտակութիւն-
եր, կաշառակերութեան, խղճափառութեան,
գրգռվածութեան, ֆլիրտի և ամեն տե-
սակ կեղտոտութիւնների համար:

Անշուշտ կեանքի մէջ չէ սպառված և
բողոքի ու զանգատի ձայնը, բայց նա ճշն-
շխմաբար և խեղճաբար ներկայ ժամանա-
կում: Սակայն աճող գոհների թիւը, ան-
կեղծ հոգիների տառապանքները, թրմ-
րած բարոյականութեան պահանջները—
ամբարում են հասարակութեան մէջ է-
լեքտրական ոյժեր, որոնք մի օր կը ըրնկ-
վեն միատեղ փոթորիկով և իրանց խախտ-
ված իրաւունքները կը վերականգնեն:

Թող բեմը ձեռք ձեռքի տուած մամու-
լին և գիտութեան օգնէ հասարակու-
թեանը հարթելու իր համար առաջադի-
մութեան ճանապարհներ: Այդ տեսակ բեմ
ստեղծելու մասին թող մտածեն և մեր

մէջ այն անձինք, որոնք հետաքրքրված են
հայ բեմի բարեփոխման և հայ թատրոնա-
կան գործի կազմակերպութեան հարցով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, ինչպէս
և իւրաքանչիւր հայ եկեղեցական մի կենտ-
րոն, տառապում է փողի պակասութիւնից:
Յանձնաժողով է կազմված՝ եկեւանական գրու-
թիւնը բարեփոխելու համար. աշխատում են
գտնէ այնպէս անել, որ մուտքի եւ ելքի հա-
ւասարակշիւութիւն լինի: Ի՞նչպէս կատարել
այդ հրաշքը: Իմաստուն յանձնաժողովը գտնում
է զարմանալի իմաստուն միջոց. չը ստանալ
բաւարարելու հնարանք մի կարգ պաշտօնեա-
նէր, պատճառ բերելով թէ նրանք ձեռացած
են «Սուրհանդակ» լրագիրը հետեւելով ման-
րամանութիւններին և հազորում պատրիար-
քական ֆինանսիստների հանձարեղ գիւտի
մասին:

Աչքերը յառած են այս միջոցին պատ-
րիարքարանի եկամտական յանձնաժողովին
վրա, որ իմաստուն կարգադրութիւններով
պատրիարքարանի պիւտձէն պիտի հաւասա-
րակշիւէ. պիւտձէն մը որուն համար ամեն
տարի կըսուի թէ հաւասարակշիւութեան է,
բայց քիչ վերջը գործնականօրէն կը հերքուի:
Բայց այդ յանձնաժողովին գործունէութեան
այ տակաւին բան մը չը հասկնայեցաւ, եւ
կերեւայ թէ յանձնաժողովը իր անձնական
նկատմաններուն կողմէ ծառայեցել իր պաշ-
տօնը, որովհետեւ նախ լրագրաց բաժանոր-
դագրութիւնները դադարեցուց, քանի որ
լրագրական դիտողութիւնները լաւ ապաւո-
րութիւն չեն ընել. հիմա ալ կը լուրի թէ
կարգ մը պաշտօնեաներ պիտի դադարեցնեն
պաշտօնէն, որովհետեւ ձեռացած են եղբւր
այ նա չեն կարող աշխատել: Բայց ինչ
պիտի ըլլան այն աւելորդ եւ նորերով ծախ-
քերը, որոնք վարչութեան մէջ և անկից
դուրս դիտուած են և բաւական պատկա-
ռելի դուրս մը կը կազմեն: Պատրիարքա-

րանի մէջ ինչպէս պաշտօնեաներ ալ չը կան
արդեօք: Միւս կողմէ կը մտածենք նաեւ
թէ, ձեռութեան կամ հիւանդութեան պատ-
րուակաւ պաշտօնէ դադարեցուցելը այդ մէկ
քանի հոգիները, ինչ տեսակ օրէնքով, եւ
կանոնին որ տրամադրութեամբ պիտի վար-
ձատրուին: Ստոյգ է որ պետութիւնն ալ
հանգստեան թոշակի օրէնք ունի, բայց 30
և աւելի տարիներ պետութեան ծառայող
պաշտօնեայ մը հանգստի կոչումը պահուն
այնքան կը վարձատրուի որքան չեն վար-
ձատրուի արգային պաշտօնեաները, նոյն
իսկ իրենց գործունէութեան ամենէն խախ-
ղող եռանդուն օրերուն մէջ: Ասկէ զատ
արդէն այդ հանգստեան կոչուելիք պաշտօ-
նեաները գործելու բոլորովին անկարող վի-
ճակի մէջ չեն. իսկ եթէ իրենց լրացաւ
տարիքը պատճառ մը պիտի ըլլայ որ դարձին
աշխատութեան, ոչ ապաքէն յանձնաժողովը
անգամ վեճ. Ստեփան Բաշա իր երիտասար-
դական թարմ օրերը շատոնց անցուցած է,
բայց այսօր բայց վարչութիւնէն, յանձնա-
ժողովներու մէջ աթոռ ունի, բանախօսու-
թիւններ կընէ և տեղեկագիրներ կուտա-
նասիրէ ու ծրագրիներու խմբագրութեամբ
ալ կը զբաղի: Այս տեսակետներով յանձնա-
ժողովը անդամները նոյն իսկ իրենց անձին
վրա դատելով կրնան համոզուիլ թէ տարեց
պաշտօնեաներու փորձառութիւնէն օգտուելու
տակաւին շատ պէտք կայ պատրիարքարանի
մէջ, հետեւաբար խնայողութիւնը պէտք է
փնտել այն կարգի ծախքերու մէջ, որոնք
պատրիարքարանի պիւտձէն մէջ տեղ եւ
իրաւունք պէտք չէ ունենան բնաւ:

Խնդիրը հէնց այն է, որ Ստեփան փաշա-
ները, իբրեւ մարդկայն վիճակ կարգադրող
ըօրեր, իրանց պէս մարդկայն են միայն ար-
ժանի համարում ձեռութեան հասակում էլ
թոշակներ վայելելու, պաշտօններ վարելու:
Իսկ երբ հարցը գալիս է պատրիարքարանի
մի որ եւ է անանուն գրադրին, արժէ երկար
ու բարակ մտածել. կարելի է բռնել նրա ձեռ-
քից ու փողոց չլորտել: Մանր մարդիկ մեծե-
ղներ են ըօրերի համար: Բայց մեծ հարց է.
պատրիարքը եւ պատրիարքարանը շատ կը
հարստանան, եթէ դադարեն լրագիրներ կար-
գալ կամ եթէ ձեռացած պաշտօնեաները գնան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

Լ օ Ն Գ Օ Ն, յունիսի 19-ին

Մի համալուր գիրք

Այս օրերում լոյս տեսաւ «Armenia» վեր-
նագրով մի մեծ աշխատութիւն, որի հե-
ղինակն է երիտասարդ անգլիացի գրաւէր Հէրի
Ֆիննիս Բլոսս Լինչ (Harry Finnis Bloss Lynch):
Մի ուրիշ անգամ թերեւս առիթ լինի տալ այս
գործի մասին կատարեալ տեղեկութիւն, որը,
անշուշտ, մի շարք յօդուածների մէջ հազիւ
թէ կարելի լինի ամփոփել. իսկ առ այժմ բա-
ւականանում եմ տալով յետագայ կողմնակի
ծանօթութիւնները:

Գիրքը ներկայացնում է երկու խոշոր հա-
տորներ 800 մեծադիր երեսներից կազմված.
Թուղթը եւ տպագրութիւնը անընդադա-
ր են. այդ բնութիւն ծախս եղած է աւելի քան
30,000 ռուբլի: Պարունակում է մօտ 200 պատ-
կերներ եւ պլաններ քաղաքների, լճերի ու
լեռների. իսկ Հայաստանի քարտէզը՝ իր ըն-
դարձակութեան, տեղագրական ճշտութեան
ու, մանաւանդ, լեռնաշղթաների յստակութեան
տեսակետից՝ անպայման կերպով գերազանց է
մինչեւ հիմա հրատարակված բոլոր քարտէզ-
ներից, եւ կարող է մրցել եւրոպական ու եւ
առաջնակարգ քարտէզի հետ: Պարուն Լինչ եր-
կու անգամ ճանապարհորդութիւն է արել Հա-
յաստանում, առաջին անգամ իրան նպատակ
անելով երկրի, ժողովրդի ու նրա պատմու-
թեան ուսումնասիրութիւնը, իսկ երկրորդ ան-
գամին զբաղված է երկրի աշխարհագրական
ուսումնասիրութեամբ միայն, ճշտելով եւ զը-
ծաղրելով գետերի, տեղերի եւ լեռների ուղ-
ղութիւնները, որոնցից մասնաւորապէս աչքի
են ընկնում Բիւրակնեան (Բինգեօ) լեռների

եւ Գրգուռ ու Ներսիս կատարների հրա-
խալին բերանների պատկերները: Նա մօտ եր-
կու տարի է աշխատել քարտէզի կազմութեան
համար. իսկ բուն գրական-ճանապարհորդական
երկասիրութիւնը, որ սկսած էր 1890-ին,
վերջերս միայն աւարտեց: Իր ճանապարհոր-
դութեան ձեռնարկելուց առաջ սկսեց գնել
հետզհետեւ եւրոպական լեզուներով գրված եւ
թարգմանված այն բոլոր գրքերը, որ կապա-
կցութիւն ունեն Հայաստանի պատմութեան,
գրականութեան եւ ճանապարհորդական ու-
սումնասիրութիւնների հետ. այնպէս որ իր անձ-
նական ուսումնասիրութիւններն անկուց եւ
ճանապարհորդական նիւթերը հաւաքելուց վեր-
ջը, իր աշխատութիւնը սկսեց կատարելագոր-
ծել իր ձեռքի տակ ունեցած անթիւ գրուած-
ներով: Որքան եւ կարող եղաւ բազմաթիւ տե-
սակցութիւններից ու խօսակցութիւններից
գտնել, նկատեցի որ պ. Լինչ անտարաժան
օգտվող չէ եղել այդ պատրաստի աղբիւրնե-
րից, այլ աշխատել է վերլուծել տարակուսելի
կէտերը, քննել զանազան հեղինակների հակա-
սութիւնները մի եւ նոյն նիւթին վերաբերող,
եւ գտնել ճշտագոյնը. իր հետ մի առ ժամա-
նակ աշխատակցելուց՝ նկատում էի, որ ժա-
մերով կանգ էր առնում մի ու եւ է պատմա-
կան բանի քննութեան առջեւ, որ տարբեր
հնչումներով է գործածված զանազան հեղի-
նակներից, մինչեւ որ կարողանում էր գտնել
գոհացուցիչ բացատրութիւնը. իր աշխատելու
այս մանրամասն, մաքնամաքիական ճշգրտութեան
հետեւող բարեխիղճ մեթոդը ինձ ենթադրել է
տալիս, որ այս հսկայ աշխատութիւնը գրա-
կան տեսակետից եւ Հայաստանի մասին հրա-
տարակված գործերի մէջ առաջին տեղը կը
գրաւի:

Յայտնի է թէ եւրոպացի հայագէտները եւ
հայոց մասին գրողները մեծ մասամբ հետեւել
են Թիւրքիայի հայոց հնչման ու տառադարձու-
թեան կանոններին՝ Վենետիկի ու Վիէնայի
Միջթարեանների ուղղակի կամ անուղղակի

գրականութեան աղբիւրներին տակ. իսկ
ոմանց գործերի մէջ կարելի է հանդիպել երկու
հնչումների կանոններին էլ, այսինքն Արարա-
տեանին եւ Արեւմտեանին՝ ինչ որ կատարեալ
չիտթութիւն է առաջ բերել յատուկ անուն-
ների նկատմամբ, այնպէս որ շատ անգամ մի
հայ ընթերցող չէ կարողանում հասկանալ այդ
բառի կամ անուան հայերէն իսկաւորակը: Պա-
րուն Լինչ ի նկատի ունենալով այս խառնա-
կութեան վնասակարութիւնը հայագիտութեան
նկատմամբ, եւ համոզված լինելով Արարատեան
հնչումի ճշգրտութեան մասին, մտածեց հետեւել
այդ ուղղութեան: Ինձ վիճակվեց, որ այս մա-
սին օգնէի իրան. թէպէս ամբողջ գիրքը շար-
ված էր եւ քարտէզները փոքրագրված, սակայն
միտքով եւ տառադարձութեան ճիշտ մե-
թոդին հետեւելու համար նա մի քանի ամիս
եւս յետաձգեց հրատարակումը, յանձն առնելով
միանգամայն այն ծախքերը, որոնք բնականօ-
րէն կարող էին առաջանալ տպագրութեան
յապագումբից: Տառադարձութեան մեթոդի
կազմութիւնը Օքսֆորդի հայագէտ պրոֆէսոր
Կոնրիէրի նկատողութեան ենթարկվելուց յե-
տոյ գործածութեան գրվեց գրքի մէջ այն
բոլոր տեղերի ու անունների նկատմամբ, որ
խառն տառադարձութեան էին կրում Գարեգ-
ի Թիւրքիայի եւ Պարսկաստանի բաժնի բո-
լոր անունները բարեփոխելու Արարատեան
հնչման մեթոդին, իսկ Ռուսաստանի բաժնի
մէջ ընդհանրապէս անփոփոխ պահպանալ ա-
նունների հնչումները, ինչպէս որ ընդունված
են ուսուցաց պաշտօնական քարտէզում, որը
դժբաղդաբար տեղ-տեղ պարունակում է թէ
հայերէն տեղային անունների սխալ հնչումներ
եւ թէ խոշոր աղաւաղումներ, ինչպէս է Սե-
ւան լիճը, որ նշանակված է «Շեանգ», մի
բառ՝ որ գոյութեան որ եւ է հիմք չունի:
Հ. Լինչ ներկայէ անկախ դիրքի տէր է.
իր աշխատութեան սենեակը ներկայացնում է
մի անաղին մատենադարան մի քանի հազար
հատորներով եւ Հայաստանի վերաբերող բո-

լոր եւրոպական գրուածներով: Ինձ սատարել
հետաքրքրում է, թէ ինչ շարժաթիթներից ար-
դեօք մի տարրական, որ հայերէն չը գիտէ,
այսքան գրականական հանգրիւն գոհողութիւններ
է անում եւ իր կեանքից տանանակ տարի է
նուիրում մեր երկրի ու ժողովրդի ուսումնա-
սիրութեան խնդրին: Իմ հարցման պ. Լինչ
պատասխանեց, թէ շատ տարիներ առաջ, երբ
ինքն եւ իր բարեկամ Քլորդը (այժմ լորդ Քլոր-
դը) փոխաբայ Հնդկաստանի) զբաղված էին
Հնդկաստանի պատմութեան եւ երկրի ու-
սումնասիրութեան մտածումով, այն եղրա-
կացութեան եկան, թէ Հնդկաստանը ուսում-
նասիրելու համար նախ հարկաւոր էր ու-
սումնասիրել Պարսկաստանը եւ այս նպատա-
կով ճանապարհորդեցին զէպի Պարսկաստան,
որի հետեւանքով լորդ Քլորդը հրատարակեց
իր ուսումնասիրութիւնը այդ երկրի մասին.
Իսկ ինք պ. Հ. Լինչ համոզում գոյացրեց թէ
Հնդկաստանի ուսումնասիրութեան բանա-
լին Հայաստան է եւ թէ առանց ուսումնա-
սիրելու Հայաստանը իր բոլոր անցեալով,
դժուար պիտի լինի գոհացուցիչ լուծում տալ
Հնդկաստանի ուսումնասիրութեան հարցին.
եւ ահա այսպէս որոշեց ի զլուխ հանել պատ-
մագրական եւ աշխարհական այս կատարեալ
գործը մեր երկրի վերաբերմամբ: Տարակույս
չը կայ թէ Անգլիայի քաղաքական շահերը
չօչափող այս գործը միջոց պիտի լինի յատա-
կօրէն ծանօթագնելու մեր երկրի պատմական,
աշխարհագրական ու գրական կեանքը Անգ-
լիայի ու անգլիախոս ազգերի քաղաքական
ու գրագէտ անձներին:

«Armenia» լինելով ուսումնասիրութիւն եւ
գիտական գրված, հեղինակը աշխատել է ի-
րան հետեւ պահել քաղաքական անկարկու-
թիւններից ու քննադատութիւններից. հեղի-
նակի հասցէն է H. F. B. Lynch, Esq. 33
Pont street, London S. W.

Վաղինակ

փողոցներում թափառելու ինչպէս մեր բոլոր հոգեւոր վարչութիւնների մէջ, այնպէս էլ Կ. Պոլսի պատրիարքարանում տիրում է մի եւ նոյն իմաստութիւնը։—«Ուղտերը կաննել եւ մտղուկները քամելը»։

«Պէպօր» երեսնամեակի առիթով «Մասիա» շաբաթաթերթը հետեւեալ կերպով է ընտրուած պ. Գ. Սունդուկեանի վերաբերմունքը դէպի այդ պիէսը։

Անոնք որ թիֆլիս այցելած ու առիթ ունեցած են պ. Սունդուկեանի հետ տեսնուելու, կը յիշեն թէ ուսանայ հեղինակը ինչ մասնաւոր գործողութիւնք մը ունի «Պէպօ»-ին նկատմամբ որուն նախամեծարութիւն կու տայ իր միւս թատերախաղերուն վրա, ինչպէս հայր մը իր այս կամ այն դասակարգի պիտի սիրէր միւսներէն։ Տարբերութիւն մը առաջ ալ, ինչպէս այսօր, ու թերեւս առաջ տարի ետքն ալ—«Պէպօն» իր ամենօրեայ մտածման առարկան է։ Օրագրող, դերասան, գրականութեան ու թատրոնի հետաքրքրիկ որ եւ է ճամբորդ, նոյն իսկ եւ պիտի պատահարէր գաղտնի վարդապետներ, թիֆլիս հասնելուն՝ անգղալարար կը մղուին պ. Սունդուկեանին ալ տեսնուելու, իբրեւ ծանօթ դէմք մը, եւ Սունդուկեանի հետ տեսակցելու «Պէպօ»-ին վրա չի խօսիլ, «Պէպօն» իմացած չըլլալ, խորունկ ցաւ մը պատճառել է հեղինակին։ Գրագէտ եկեղեցական մը, ինչպէս լսած եմ ատենադ., այս հարկին մէջ կը գտնուի Կովկաս ուղեւորութեան մը առիթիւ։ Ձիւքը հիւրընկալող բարեկամները կրնային թէ նոյն օրը, իրիկունս կողմ, պ. Սունդուկեանի իրեն այցելութեան պիտի գայ։ Սրբազանը, որ «Պէպօն» չէր կարդացած ու Պոլսոյ թերթերուն մէջ անոր վրա հրատարակված ուսումնասիրութիւններն ալ չէր յիշեր, կուսկելով թէ ինչ դժուարին կացութեան մէջ պիտի գտնուի, իսկոյն բերել կուտայ թատերախաղին տպագիր տետրակը «Կենսաբանական գրական-ճանապարհ» ու ծայրէ ծայր կը կարդայ մէկ շունչով։ Իրեն համար, գրադարական հաճոյք մը ըլլալէ աւելի՝ բարեկրթութեան պարտք մըն էր այդ անմիջական ընթերցումը։ Շատ չանցած, պ. Սունդուկեանի կը ներկայանայ, եւ խօսակցութիւնը՝ իր բնական կարգով կուգայ կը հասնի «Պէպօն» որուն վրա իր գնահատումը ու կարծիքները յայտարարած նորէն կը պարզէ պարզի եպիսկոպոսը, զարմանք պատճառելով հեղինակին թէ տարիներ առաջ կարդացված գործ մը ինչ թարմ ու անպայայտ ազդեցութիւն թողուցեր էր իր խօսակցին մտքին մէջ։

Մեր «գրագէտ սրբազաններ» համար այս պիտի մի դաս հարկաւոր էր, իսկ ինչ ասինք անգրագէտ սրբազանների մասին...

ՄԻ ՆՈՐ ԴԱՓՆԻ ԷԼ

Մի նոր դափնի էլ, ի հարկէ, Գարբիէլ Սունդուկեանի վաստակաւոր ձեւակերպում...

Այդ դափնին յարգանքով եւ սիրով մատուցանում է Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական ընկերութիւնը, որը մայիսի 14-ի ժողովում միաձայն որոշեց յօրելարի յիշատակը յաւերժացնելու համար ստանալ մի գիշերօթիկ սան պահել նրա անունով տեղիս հոգեւոր դպրոցում։

Այդ դափնին մատուցանում է Բարեգործական ընկերութիւնը, որովհետեւ Բարեգործական ընկերութեան նպատակն է աղքատների ծանր վիճակը թեթեւացնել, խեղճերի արտասուքը սրբել, տարածել ուսումը, գիտութիւնը, բարեգործը բարձր ու վարժը մեր ժողովրդի մէջ։

Եւ միթէ այդ իսկ չէ բանաստեղծների նըպատակը, ցանկութիւնը, իղձը։ Ահա ինչպէս է Գարբիէլ Սունդուկեանի 25-ամեայ յօրելարի առիթով խօսում անմոռաց Գաւառ-Քաթիպան։

Ազգիս շարաւոտ վէրքը լուսնալ, Լիբը մեծատունին անվախ ապտակել, Գոհարով ծածկած կեղտերը բանալ, Կեղծաւորների դիմակը պոկել Ու խեղճ կիսնային դնել մարդու շար— Այս ամենը զօրեց միայն քո հանձնար։

Այդ հանձնարի որպիսութիւնը եւ նշանակութիւնը այնչափ լաւ եւ մանրամասն նկարագրեց «Մշակի» տաղանդաւոր աշխատակից պ. Լէօն, որ մեզ ոչինչ չէ մնում աւելացնելու։

Հայոց բարեգործական ընկերութեան անդամների բերնից մի կը ցանկայի սակ միայն մի բառ, յայտնել մի ցանկութիւն...

Ամենախելօք գիրքը, որ եւ կարդացել եմ իմ կեանքում, Նոր կտակարանն է։ Մի գեղեցիկ եւ իմաստուն խօսք այդ սուրբ գրքից մտել է, բեւեռվել է իմ ուղեղի մէջ եւ այդ խօսքն է՝ «Երկիրը եւ երկիր անցնեն եւ բանք իմ ոչ անցնին»...

Երկիրը եւ երկիր անցնեն եւ բանք իմ ոչ անցնին...

Այն, ջոկ ջոկ ամենիս համար այդ մարգարէութիւնը կիրաւորվի, երկիրը պիտի խաւարի եւ երկիրը բանայ անկուշտ գիրքը ու սեղմէ, արորէ, ոչնչացնէ, հող դարձնէ մեզ։ Կը դայ այդ օրը եւ Գարբիէլ Սունդուկեանի համար անշուշտ, վաղ թէ ուշ... բայց նա անվախ կը տեսնէ նրան, որովհետեւ թէ եւ նրա կապոյտ երկիրը նոյնպէս պիտի խաւարի, չքանայ եւ այն հողը, որին նա այնչափ ազնիւ ծառայում է, պիտի անցնէ, երթայ, տալայն կը մնան բանք... Նրա գեղեցիկ, քաղաքական, տաղանդաւոր գրութիւնները, նրանք կը մնան դարեր, ուժեղ, թարմ, քարոզչական ազնւութիւն եւ բարութիւն, կը մնան անցնելով սերնդէ սերունդ, ազգէ ազգ, որը պիտի օրհնէ մեր տաղանդաւոր Գարբիէլների անունները եւ յիշատակը...

Եւ որովհետեւ բանք ոչ անցնին, եւ կը ցանկայի, որ պ. Սունդուկեանի երկիրը եւ երկիրը դեռ երկար, շատ երկար մնային, չանցնէին...

Գր. Չալսուշեան

ՌՈՒՍԱՅ ԹԱՏՐՈՆ

Զորքաբեթի, յունիսի 13-ին, Պրավդինի դերասանական խումբը ներկայացրեց Ֆեօդորովի «Բյւրեղ» պիեսը, բաղկացած հինգ գործողութիւնից։

Պիեսի մէջ հանդէս է բերված մայրաքաղաքի գրական-գեղարուեստական մի շրջանի պատկերը։ Բացասական կողմերով։ Այդ շրջանի մէջ է ընկել գաւառից մայրաքաղաք եկած մի թարմ ուժ, երիտասարդ Տիւմենկով (Իլիինսկի)։ Գրական նոր գործողի առաջին աշխատութիւնները իրանց թարմութեամբ, իրանց հարազատութեամբ սկսում են յուզել մտքը եւ գրաւում են իրանց վրա ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը։ Տիւմենկով հոչակ է ստանում։ Գրական գործողների շրջանում սկսվում է դէպի նոր գործողը նախանձ եւ թշնամութիւն, որը ստատկանում է մասնաւոր այն օրից, երբ գեղեցիկ եւ յայտնի գերաստուհի Նիկոլայեա (Նարոչկինա) սկսում է առանձին ուշադրութիւն եւ համարութիւն ցոյց տալ Տիւմենկովին։

Դերասանուհին հետաքրքրված է թարմ երիտասարդի կուսական անձնաւորութեամբ եւ գտնում է առանձին հաճոյք այն մաքառման մէջ, որ նա գործ է դնում գիթելու երիտասարդին եւ գրաւելու նրա սիրտը։ Դերասանուհու եւ երիտասարդի մէջ յարաբերութիւնները սկսում են աւելի մոտրիմ կերպարանք ստանալ այն օրից, երբ երիտասարդը տալիս է ներկայացնելու իր շարադրած պիէսը, որի մէջ գերաստուհին առաջնակարգ դեր ունէր կատարելու իր բենեֆիսին։ Երիտասարդը յաղթվում է գերաստուհու հրապոյրներից եւ միւրահարվում նրա վրա։

Բայց գաւառում նրան սպասում է մի անկեղծ բարեւիրտ աղջիկ, որին նա խօսք է տուել ամուսնանալու։ Նշանածը գալիս է Պետերբուրգ ուղիղ այն օրը, երբ պէտք է արվէր Տիւմենկովի պիէսի ներկայացումը։ Նա չը գիտէր, որ նրա համար կորած էր Տիւմենկով եւ երբ այդ իմաստաւ, խմեց թոյն։

Սակայն գերաստուհին էլ, երբ հասաւ իր նպատակին եւ իր տղերի առաջ տեսաւ երկրպագող Տիւմենկովին, զգաց իրան լիացած եւ բաւարարված։ Նրան այլ եւս հարկաւոր չէր Տիւմենկով։

Պիեսը ունի բեմականութիւն, աղողված տեսարաններ։ Նարոչկինա ցոյց տուեց այդ պիեսի մէջ տաղանդ, կանայից քնքութիւն, մանկական բերրութիւն, նուրբ առաձգականութիւն եւ հոգեբանական մոմենտների ըմբռնողութիւն։ Իլիինսկի միջակ տարաւ իր դերը։ Նա գեղեցիկ էր չորրորդ գործողութեան մէջ, ուր նա բացատրում է, թէ ինչ է ուղեւոր եղել նա ներկայացնելու իր պիեսում։ Բնորոշ էր Պրավդին բարի եւ չիտակ մարդու ու խորհրդատուի դերում։

Պիեսի վերջին գործողութիւնը անբաւարար տպաւորութիւն է թողնում։

Ք.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՈՒՑ

Յունիսի 2-ին

Վերջապէս անցաւ մայիսի 29-ը, որին անհամբեր սպասում էր ամբողջ մեր քաղաքը։ Այսօրվայ ընտրութիւնը որոշ չափով պէտք է նախազօգրէ քաղաքային վարչութեան չորսամեայ գործունէութիւնը։ Այդ օրը պէտք է ցոյց տար, թէ ինչ մտաւոր եւ բարոյական քայլ

են արել ալեքսանդրապոլսիները վերջին 4 տարվայ ժամանակամիջոցում, 1897 թւի ընտրութիւններից յետոյ։

Ընտրութիւններն անցան, դժբաղդաբար, շատ անաշուղ, չնորհիւ այն նեղ կուսակցական ոգու... որ թագաւորում էր բոլորի սրտում։ Քաղաքացիները չէին եկել ընտրելու ձայնաւորներ, որոնց գիտակցական գործունէութիւնից է կախված քաղաքի լաւ ապագան, այլ հաւաքվել էին ընտրելու քաղաքագլխի եւ վարչութեան անդամի այս կամ այն թեկնածուին ձայն տուողներին։

Թէ որքան ուղիղ է առաջներս, ապացոյց է է այն փաստը, որ 112 ընտրողներից չը գտնվեց ձայնաւորների հարկաւոր թիւը—41 հոգի, որովհետեւ ամեն մէկ կուսակցութեան մարդիք աշխատում էին «սեւացներ» հակառակորդներին եւ ձայն տալ իրանցին։ Ամբոխի մի մասին հաւատացրել էին, որ այժմեան քաղաքագլուխը աւելի յարմար է իր պաշտօնում, քան նոր թեկնածուն, իսկ վերջինիս կողմակիցները, տեսնելով պ. Աբիս Յովհաննիսեանի մէջ մեծ առաւելութիւններ, աշխատում էին ամեն կերպ նրան կանգնեցնել քաղաքի գործերի գլուխ։ Այսպէս, ընտրողների գլխաւոր մեծամասնութիւնը դարձել էր խաղաղք մի քանի աղքեցիկ մարդկանց ձեռքում եւ անգիտակցաբար ձգում էին սեւ կամ սպիտակ քուէն ի հարկէ այդ ինտրիգաներին պէտք է վերագրել մի քանի նախկին գործունէալ ձայնաւորների չը վերընտրվելը, որոնք, իբրեւ իրանց համոզմունքի տէր մարդիկ եւ գիտակցաւոր գործողներ, համարեա միակն էին ամբողջ նախկին կազմի մէջ։ Միայն այս ստոր միջոցներն էին պատճառ, որ ձայնաւոր չանցան երկու համալսարանականներ, որոնք իրանց թէ մասնագիտութեամբ եւ թէ բարձր կրթութեամբ մեծ օգուտ կարող էին տալ քաղաքին։

Վերոյիշեալ «սեւացանքների» տեղ վերընտրվեցին հին կազմից անգոյն ձայնաւորներ, իսկ նորերից այնպիսիները, փոքր բացառութեամբ, որոնք պէտք է նիստերի գան կամ իրանց թարգմաններով, ըստ օրէնքի, կամ եթէ ոչ, պէտք է լուր ու մտնայ նստեն եւ ամեն առաջարկին «բալի աղա» ասեն։ Բանն այն է, որ այդ ուղղորդներին մէջ կան ոչ թէ միայն ուսուցիչ իսկ ոչ չիմացողներ, այլ իրանց անունը անգամ ստորագրել չը գիտողներ։

Այստեղից հասկանալի է, որ ինտրիգաները անգոյն վնաս հասցրին քաղաքին նրանով, որ չը տուին ընտրողների մի որոշ բարոյական չափ, որով նրանք զեկավարվեցին ընտրութիւնների ժամանակ, չը հասկացրին նրանց, որ մէկ ձայնաւորի սեւ կամ սպիտակ քուէից շատ անգամ կախված է ինչու բացել կամ չը բացել քաղաքում ուսումնարաններ, հիւանդանոցներ, ժողովրդական տներ եւ ուրիշ գրանց պէս օգտակար ձեւերի միջոցներ, որոնք իրաքանչիւր քաղաքի պարծանքը եւ զարդն են կազմում։

Սրտի դատով պէտք է ասել, որ պ. նախագահը գոնէ ներդրեւ չը քաղեց լրացնել այդ պակասութիւնը, հասկացնելով անփորձ ժողովրդին, թէ ինչ նշանակութիւն ունի ամեն մէկ ձայնաւորը քաղաքի վերաբերեալ հարցերը վճռելիս։ շատ կարելի է ընտրողները այդ հասկանալուց աւելի գիտակցաբար վերաբերվէին դէպի իրանց պարտականութիւնները։

Բացի դրանից, նկատվեց երկու մեծ գեղծունէութիւն, առաջինը, երբ հարկաւորին չափ ձայնաւորներ չընտրվեցին նախապէս թերթիկներով առաջարկված թեկնածուների միջից, երբ պէս ժողովը չը յետաձգվէր միւս անգամի եւ ներդրեւ չը լինէր նորից հաւաքվելու, ըստ առաջարկութեան նախագահի, սկսեցին երկրպագողները իրանց ձայնաւորներին առաջարկել քուէարկվելու, որոնք ոչ մի ձայնով չէին առաջարկվել թերթիկները տալու ժամանակ։ Պէտք է տեսնել, թէ ինչպէս էին հրաժարվում նրանք գնել իրանց քուէտուրքը, գոնէ ներքին համոզմունքով իրանց անարժան գտնելով, բայց ամբոխին մի երկու գոհն էին հարկաւոր նորից չը հաւաքվելու համար—այս պիտի ընտրվեցին մի քանի ձայնաւորներ հարկաւոր թիւը լրացնելու համար։ Ի հարկէ, այդ միջոցում ընտրողները զեկավարվում էին միայն այն մտքով, որ չը լինէր թէ նրանք էլ չանցնեն եւ իրանք ստիպւած լինեն «գործերը թողնել» նորից հաւաքվել։

Մեր կարծիքով նախագահը (քաղաքագլուխը) չը պէտք է թոյլ տար, որ ժողովուրդը այդպէս թեթեւ վերաբերվէր դէպի ինքնավարութեան բարձր գործը։

Երկրորդ գեղծումը նրանում է կայանում, որ ամբողջ ժամանակ թէ դանիճի եւ թէ հա-

րեւան սենեակների մէջ անյուզարձ էին անում եւ ժողովականների հետ յարաբերութիւններ ունէին ինքնավարութեան զանազան պաշտօնեաները, որոնց ազդեցութիւնը անկասկած նշանակութիւն ունեցաւ ընտրութիւնների հետեւանքների վրա։ Այդ բանը պէտք է նախատեսել պ. նախագահը եւ եթէ նրան հարկաւոր էին մարդիկ կարգապահութեան համար (որոնք հարկաւոր չեկան), դրանք պէտք է կանգնած լինէին ժողովրդից դուրս, մուտքի մօտ։

Ահա մեր ձայնաւորների ընտրութեան պատկերը։ Թէ ինչ օգուտ կը ստանայ քաղաքը այդ ձեւով ընտրվածների գործունէութիւնից, մօտ ապագան ցոյց կը տայ։

Կապրենք կը տեսնենք։

F. R.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունիսի 12-ին

«Մշակ» № 124-ի մէջ Թիֆլիսի Կաթողիկէ ս. Աստուածածին եկեղեցու ծխականներից մէկը, պ. Ալ. Ստեփանեան, պահանջում է ինձանից բացատրութիւն, թէ ինչ իրաւունքով եւ վերոյիշեալ եկեղեցու փողոցից վճարել եմ 500 ռուբլի եւ ինչու համար։ Ուստի խնդրում եմ մի անկիւն շնորհել երկուողիս։

Անցեալները Թիֆլիսի Զօրաբաշի ս. Գէորգ եկեղեցու միասնական քանանայ Մանդակունի բանաւոր դիմեց ինձ, որ էլ վիճաբանեմ սինօդի հրամանով Թիֆլիսի կարողաւոր եկեղեցիները պարտաւոր են տալ փոխարինարար 2758 ռ. նոյն եկեղեցու հոգաբարձութեանը սենեակներ շինելու համար։ Ես իսկոյն պատասխանեցի քանանայ Մանդակունի, որ 1) եկեղեցական գրամների վերաբերմամբ ոչ մի բանաւոր հրաման կատարել չեմ կարող եւ 2) որ Կաթողիկէ ս. Աստուածածին եկեղեցին մօտիկ ապագայում վերանորոգվելու է եւ ունի իր կարիքները, այնպէս որ ոչ միայն իր ունեցած գուժաւոր չէ բաւականաւոր, այլ եւ այդ վերանորոգութեան համար ինքեւ ստիպված պիտի լինեմ փոխառութեան դիմել։ Հետեւեալ օրը ստացայ տեղիս կոնստաբոլայի № 2040 հրամանը, որը հիմնվելով սինօդի ներկայ տարվայ մարտի 21-ի № 326 հրամանի վրա, պատահութեամբ է ինձ տալ Զօրաբաշի ս. Գէորգ եկեղեցու հոգաբարձութեանը փոխարինարար 700 ռ.։ Մի եւ նոյն գործը համար եւ նոյն օրը ես հրաւիրվեցի կոնստաբոլաւոր, ուր ինձ անդամները պաշտօնապէս հրամայեցին անպատճառ ներկայացնել վերոյիշեալ գումարը։ Ես, յայտնելով եկեղեցու ապագայ վերանորոգութեան խնդիրը, խնդրեցի թեթեւացնել այդ պահանջը եւ աւելորդ պահանջել միւս կարողաւոր եկեղեցիներից։ Սարգիսով խնդրեա, կոնստաբոլան հրամայեց ինձ ներկայացնել միայն 500 ռուբլի, որպիսի հրամանը եւ կատարեցի եւ ստացայ կոնստաբոլայից ամսիս 6-ից դըրված № 108 ապահովագիրը։

Երէցիփա Գ. Բայանդուրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հետաքրքում են Եւլիս կայարանից հետեւեալը։ «Զորքաբեթի, յունիսի 15-ին, երկույեան 5 ժամին, Եւլիս-Եւլիս խնդուր վրա, Տէր-Գաւառեանի ղեկավարած վեց տեղանի օմիլիուս կառքը Թարթար գետով անցնելիս՝ անմիջապէս գետի մէջտեղը շուռ է գալիս։ Բոլոր ձանապարհորդները իրանց իրեղէններով ջուրն են ընկնում։ Պատահաբար պատճառ է նախ, որ կառքում եղել են 14 հոգի, ինքը ներսը, երեքը դուսը եւ երկուսն էլ վերեւը իրեղէնների հետ, եւ երկրորդ՝ կառքը յանձնված է եղել անփորձ կառապանին։ Իրեղէններից շատը ջուրը տարաւ, իսկ մարդիկ ազատվելով եկան Եւլիս կայարանը։

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ կովկասեան ցուցահանդէսում ժանտախտի պատճառով չը պէտք է լինի եղջիրաւոր անասունների բաժին։ Ներքին գործերի մինիստրութիւնը նկատողութեան տաւաւ այն հանգամանքը, որ Անդրկովկասի զանազան մասերում մինչեւ այժմ շարունակվում է ժանտախտը եւ որ ցուցահանդէսը կարող է պատճառ լինել հիւանդութեան տարածման։ Անկասկած շատ ցաւալի է, որ մեր երկրի տնտեսութեան մի այդպիսի խոշոր ձեւը, ինչպէս է անասնապահութիւնը, պէտք է բացակայէ ցուցահանդէսից։ Հանդէս կը բերվին միայն ձիեր ու թռչուններ, որոնք չեն վնասվում տաւարի ժանտախտից։

Պետերբուրգից «Рыск. Вѣд.» լրագրին հաղորդում են. «Միջնակարգ դպրոցի բէֆօրմի համար կազմված յանձնաժողովը նիստ ունէր

